ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲՄԾՁԲ-17/1

ք. Երևան 23 օգոստոսի 2017 թ.

ՀՀ ԿԱ ԱԳ կադաստրի պետական կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վ.Հասրաթյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Մեգասոֆթ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Հայրապետյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է քարտեզագրման համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 11300000 (տասնմեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե	«ՄԵԳԱՍՈՖԹ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7	Հասցեն՝ ք.Երևան, Չարենցի 1
հ/հ 900011015287	ԱԿԲԱ կրեդիտ ագրիկոլ բանկ ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Դավիթաշեն մ/6
ՀՎՀՀ 02534328	հ/հ 220290124225000
Աշխատակազմի ղեկավար՝	ՀՎՀՀ 00931397
Վ. Հասրաթյան_____	Տնօրեն_____Ա..Հայրապետյան
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲՄԾՁԲ-17/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
2	72211156/2	Քարտեզագրման համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ	ՀՀ դրամ	11300000	1	Ք.Երևան, Արշակունյաց 7	10.12.2017 թ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ» ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Սույն բնութագրով սահմանվում են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից շահագործվող «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային համակարգում /այսուհետև՝ Էլեկտրոնային համակարգ/ ծրագրային համակարգում անհրաժեշտ ծրագրային ապահովման փոփոխությունների և լրացումների տեխնիկական պահանջները:

1. Էլեկտրոնային համակարգում ծրագրային համակարգում ծրագրային փոփոխություններն ու լրացումները պետք է նախագծվեն հաշվի առնելով այդ համակարգերի ճարտարապետությունը և աշխատանքի սկզբունքները:

1. Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքները պետք է Պատվիրատուին տրամադրվեն որպես «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային համակարգի ծրագրային ապահովման ընդլայնումներ /extensions/:

1. Պատվիրատուն ծրագրային փոփոխությունների մշակման աշխատանքները իրականացնողին կտրամադրի մշակման համար անհրաժեշտ ելակետային նյութերը /source code/ և տեխնիկական փաստաթղթերը:

2. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Դիմումի ընդունման առաջին փուլում ստեղծվելու է նոր դիմումի տեսակ <Ենթակառուցվածքների նկատմամբ իրավունքի պետական գրանցում>, որի հետագա ընթացքը ունենալու է որոշակի առանձնահատկություններ: Ընդ որում դիմումի ընդունման առաջին փուլում անհրաժեշտ է, որ հասցե դաշտ ընտրելիս հնարավոր լինի ընտրել միայն մարզ, իսկ համայնք դաշտը չլինի պարտադիր:

2. Դիմումի ընթացքի առաջին երեք փուլերը մնում են նույնը: Չորրորդ փուլում, երբ ռեգիստրը ստեղծում է քարտեզ-մուտքագրում-գրանցում պրոցես, անհրաժեշտ է, որ մուտքագրման պրոցեսում, այն արխիվային գործը,

որը նախապես ստեղծվել է, կադաստր տեքստայինում <Անշարժ գույքի միավորի նկարագիր> դաշտում ունենա ենթակառուցվածքներ վերնագրով նոր ենթաբաժին հողամասեր և շենքեր ենթաբաժինների նման, որն իր մեջ պարունակելու է ստորև նշված դաշտեր՝

a. Ենթակառուցվածքի ընդհանուր նկարագիր

b. Ենթակառուցվածքի մասեր

c. Կից միավորներ

Ենթակառուցվածքի ընդհանուր նկարագիր

- <Ենթակառուցվածքի հասցե>, դիմումի մուտքագրման պատուհանում հասցեն ավելացվում է ընտրելով մարզ և համայնք, ու նկարագրության դաշտում լրացվում է տվյալ մարզի սկզբնական համայնքի ու վերջնական համայնքի անվանումները

- <Ենթակառուցվածքի նկարագիր>, այստեղ լրացվում է մարզի մի սահմանից մյուս սահմանն ընկած հատվածի նկարագիրը,

- <Երկարություն (Գծամետր)> լրացվում է տվյալ ենթակառուցվածքի ընդհանուր երկարությունը

- <Սերվիտուտով տրամադրվող հողամասի չափ> լրացվում է տվյալ ենթակառուցվածքի համար տրամադրվող սերվիտուտի ընդհանուր մակերեսը

-

Ենթակառուցվածքի մասեր

- <Ենթակառուցվածքի մասի ծածկագիր>, որի ֆորմատը դեռևս որոշված չէ, սակայն համակարգը չպետք է թույլ տա նույն ծածկագրի մուտքագրում, իսկ ծածկագրի թվերի առաջին խումբը՝ մարզի կոդը և համայնքի կոդը ավտոմատ լրացվի

- <Ենթակառուցվածքի տեսակ> (օր. Գազատար, ջրատար) (պարտադիր լրացման դաշտ) ընդ որում՝ Դասակարգիչներ> Անշարժ գույքի տեղեկատու բաժնում հնարավոր լինի ավելացնել կամ խբագրել տեսակները

- <Դիրքը>, որի ցանկում բերում է՝ վերգետնյա թե ստորգետնյա (պարտադիր լրացման դաշտ),

- <Երկարություն (Գծամետր)>

- <Տրամագիծ> (ոչ պարտադիր լրացման դաշտ)

- <Կառուցման տարեթիվ> (ոչ պարտադիր լրացման դաշտ)

- <Լրացուցիչ նկարագիր>

- Մուտքագրված ենթակառուցվածի անվանումը, առկայության դեպքում գծամետրը, առկայության դեպքում սերվիտուտով տրամադրվող հողամասի չափ և ծածկագիրը:

Կից միավորներ

- <Կից միավորներ>, որը հնարավորություն կտա տվյալ ենթակառուցվածքի մասի համար լրացնել այն հողամասերը որտեղ պետք է ավելանա սերվիտուտ իրավունքի տեսակ

- Արխիվի կոդ

- Հողամասի ծածկագիր

- <Երկարություն (Գծամետր)>

- <Սերվիտուտով տրամադրվող հողամասի չափ>,

3. Տվյալ դիմումի պրոցեսի ավարտից հետո, եթե իրավունքներ և սուբյեկտներ մասում ավելացվում է <Սեփականություն>, <Ընդհանուր համատեղ սեփականություն> և <Ընդհանուր բաժնային սեփականություն> տեսակի իրավունք, ապա անհրաժեշտ է, որ <Կից միավորներ> դաշտում մուտքագրված կադաստրային գործերի (որոնց համար <Սերվիտուտով տրամադրվող հողամասի չափ> դաշտը ակտիվ է) իրավունքներ և սուբյեկտներ բաժնում ավելանա սերվիտուտի իրավունք: Գրանցման ամսաթվի, վկայականի համարի, բաժնեմասեր և սուբյեկտներ դաշտերը ավտոմատ լրացվեն տվյալ դիմումով կազմված ավարտական փաստաթղթի (սեփականության վկայականի) տվյալները, կցված ծածկագիրը՝ տվյալ ենթակառուցվածքի մասի մեջ մուտքագրված ծածկագիրը՝ <Սերվիտուտով տրամադրվող հողամասի չափ> դաշտում լրացված մակերեսով, իսկ հիմք հանդիսացող փաստաթղթերը տվյալ դիմումով ենթակառուցվածքի կադաստրային գործի իրավունքներ և սուբյեկտներ բաժնում լրացված հիմք հանդիսացող փաստաթղթերը:

4. Տվյալ դիմումի պրոցեսի ավարտից հետո անհրաժեշտ է, որ <Կից միավորներ> դաշտում մուտքագրված բոլոր կադաստրային գործերի փաստաթղթերում ավելանա <Դիմում> տեսակի փաստաթուղթը և ավարտական փաստաթուղթը:

5. Տվյալ դիմումի պրոցեսի ավարտից հետո անհրաժեշտ է, որ <Կից միավորներ> բաժնում մուտքագրված կադաստրային գործերի, (որոնց համար <Երկարություն (Գծամետր)> դաշտը ակտիվ է) իրավունքներ և սուբյեկտներ բաժնում առկա գործող կարգավիճակ ունեցող <Սեփականություն>, <Ընդհանուր համատեղ սեփականություն>, <Հողամասի կառուցապատման իրավունք> տեսակի իրավունքների լրացուցիչ նշումներում ավելանա տեքստ հետևյալ բովանդակությամբ՝ <<Տվյալ հողամասով անցնում է x գծմ xx տեսակի ենթակառուցվածք): x լրացվում է <Կից միավորներ> բաժնի տվյալ կադաստրային գործի համար լրացված <Երկարություն (Գծամետր)> վանդակից, իսկ xx լրացվում է տվյալ ենթակառուցվածքի մասի տեսակից:

6. Գրանցման ժամանակ համակարգը պետք է ստուգի արդյոք յուրաքանչյուր ենթակառուցվածքի մասի համար լրացված <Երկարություն (Գծամետր)> և <Սերվիտուտով տրամադրվող հողամասի չափ> դաշտերը հավասար են համապատասխանաբար տվյալ ենթակառուցվածքի ընդհանուր նկարագիր բաժնում <Երկարություն (Գծամետր)> և <Սերվիտուտով տրամադրվող հողամասի չափ> ենթադաշտերի գումարին: Հավասար չլինելու դեպքում գրանցում չթողնի իրականացնել՝ բերելով համապատասխան հաղորդագրություն:

7. Շենքեր մասում անհրաժեշտ է, որ լինի հնարավորություն կցելու այն կադաստրային գործերը, որոնք շենքեր մասում մուտքագրված տվյալները պետք է արտացոլվեն ավարտական փաստաթղթում (սեփականության վկայականում):

8. Ընդհանուր նկարագիր դաշտում տարածագնահատման գոտի և շենքի կադ. արժեք դաշտերը տվյալ տեսակի արխիվային գործերի համար պետք է դառնան ոչ պարտադիր:

9. Սահմանափակումներ և գործարքներ բաժինները պետք է աշխատեն առկա տրամաբանությամբ, սակայն համակարգում առկա հաշվետվություններում չպետք է արտացոլվեն:

10. Ենթակառուցվածքների գրանցումների վերաբերյալ անհրաժեշտ է ստեղծել առանձին հաշվետվության տեսակ (Ֆորմատը կուղարկվի):

11. Ավարտական փաստաթղթի կազմում՝

- Հասցե դաշտում արտացոլվում է տվյալ ենթակառուցվածքի հասցե դաշտում և շենքեր բաժնում կցված բոլոր կադաստրային գործերի հասցե դաշտերում լրացված տվյալները հերթականության սկզբունքով՝ իրարից տարնաջատելով ստորակետով
- Հողամասի բնութագրեր դաշտում լրացվում է տվյալ ենթակառուցվածքի շենքեր բաժնում կցված բոլոր կադաստրային գործերի հողամասեր բաժնում մուտքագրված տվյալները հերթականության սկզբունքով՝ իրարից տարնաջատելով ստորակետով

- Շինությունների բնութագրեր բաժնում նպատակային նշանակություն դաշտը միշտ լրացվում է արտադրական (by default)

- Շինությունների բնութագրեր դաշտում Բնութագրերը ըստ առանձին շինությունների դաշտում լրացվում է ենթակառուցվածքներ դաշտում, ինչպես նաև շենքի մասերում կցված կադաստրային գործերի շենքեր և կառուցվածքներ դաշտերում լրացված տվյալները: Ընդ որում՝ եթե ենթակառուցվածքի տվյալներում <Տրամագիծ> դաշտը լրացված է, անհրաժեշտ է, որ արտացոլվի գծմ-ի տակ փակագծերով:

Միասնական տեղեկանքի տրամադրում

12. Դիմումի ընդունման առաջին փուլում ստեղծվելու է նոր դիմումի տեսակ <Ենթակառուցվածքների միասնական տեղեկանքի տրամադրում>, որի ավարտական փաստաթուղթը կազմելիս պետք է արտացոլվի նաև տվյալ ենթակառուցվածքի սեփականության վկայականում վերոգրյալ փոփոխությունները ևս:

նպ. նշանակություն
վկ. հավելված՝ ծածկագիր, չափ, հա
լրացուցիչում նստի սեվիտուտի չափ:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՄՇԱԿՎԱԾ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

1. Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծրագրային ապահովման մշակողը Պատվիրատուի հետ ծրագրային ապահովման մշակման պայմանագիրը կնքելուց հետո մեկամսյա ժամկետում պետք է Պատվիրատուի հետ համաձայնեցնի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված էլեկտրոնային ծառայությունների ձևաչափերը, դրանցում ներառվող տվյալների կազմը, դրանց ձևավորման չափանիշները, ինչպես նաև սույն տեխնիկական բնութագրով նախատեսված լրացումների տեխնոլոգիական լուծումները և մանրամասն բնութագրերը, արտադեմային լուծումները, ինչպես նաև սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների իրականացման, փորձարկման և հանձնման ժամկետները:
2. Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների ադյունքում մշակված ծրագրային ապահովման ընդլայնումները պետք է հանձնվեն Պատվիրատուին ըստ պատրաստվածության աստիճանի՝ նախապես համաձայնեցված ժամկետներում:
3. Կատարողը չի կարող որևէ այլ կերպ փոփոխության ենթարկի էլեկտրոնային համակարգի ծրագրային ապահովումը, քան դա անհրաժեշտ է սույն տեխնիկական բնութագրով անհրաժեշտ լրացումների իրականացման համար:
4. Կատարողը պետք է ապահովի Պատվիրատուի կողմից տրամադրված փորձարկման ենթակառուցվածքում Կատարողի կողմից իրականացված յուրաքանչյուր ընդլայնման՝ որպես էլեկտրոնային համակարգի բաղկացուցիչ մասի փորձարկումը:
5. Կատարողը պետք է ապահովի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված էլեկտրոնային ծառայությունների ներդրման հետ կապված ցանցային ծրագրային կարգաբերումները:

Աշխատանքի կատարման ժամկետը	
սկիզբը	ավարտը
Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց	10.12.2017թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
հ/հ 900011015287
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի ղեկավար՝
Վ. Հասրաթյան _____
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«ՄԵԳԱՍՈՖԹ» ՍՊԸ
Հասցեն՝ ք.Երևան, Չարենցի 1
ԱԿԲԱ կրեդիտ ագրիկոլ բանկ ՓԲԸ
Դավիթաշեն մ/ճ
հ/հ 220290124225000
ՀՎՀՀ 00931397
Տնօրեն՝ _____ Ա..Հայրապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2

ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲՄԾՁԲ-17/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազար ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում				
			սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	72211156/2	Քարտեզագրման համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ	11300.0	11300.0	11300.0	11300.0	11300.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
հ/հ 900011015287
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի ղեկավար՝

Վ. Հասրաթյան _____
/ստորագրություն/

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«ՄԵԳԱՍՈՖԹ» ՍՊԸ
Հասցեն՝ ք.Երևան, Չարենցի 1
ԱԿԲԱ կրեդիտ ագրիկոլ բանկ ՓԲԸ
Դավիթաշեն մ/ճ
հ/հ 220290124225000
ՀՎՀՀ 00931397

Տնօրեն _____Ա..Հայրապետյան
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված 3
ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲՄԾՁԲ-17/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲՄԾՁԲ-17/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն